Հովհաննես Թումանյան

Երբ խոսում էիր, պատմում էիր ինձ...

Երբ խոսում էիր, պատմում էիր ինձ,
Ես այն ժամանակ արբած քո շնչից
Եվ հափշտակված քեզ էի նայում.
Իմ հոգին մենակ այն էր գրավում,

Թե ինչպես էին շարժվում բորբոքված
Թերթիկները քո վարդագույն շրթանց.
Ինչպես աչքերդ արտևանունքիդ
Ստվերների մեջ, որպես ծով հանգիստ,
Մերթ լցվում էին խաղաղ հրապույրով,

Մերթ վառվում էին կենդանի հրով...
Այնպես էր թվում՝ երազում էի,
Եվ իբրև հեռվից ես լըսում էի
Մի նոր մեղեդի անո՛ւշ, անբարբառ...
Ա՛հ, նորից խոսիր, բայց երկա՛ր, երկա՛ր...

1891